ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 մարտի 2012 թ. թիվ 37 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ,,ԻՋԵՎԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ'' ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ՈՒԱԶ ՄԱԿՆԻՇԻ 3 ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՕՏԱՐՈՒՄԸ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Բաժնետիրական ընկերությունների մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 68-րդ հոդվածի 6-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ,,Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին'' ՆՀ-728 հրամանագրի 1.5 կետի ,,ժբ'' ենթակետի դրույթներով, հիմք ընդունելով ,,Իջևանի բժշկական կենտրոն'' փակ բաժնետիրական ընկերության տնօրենի 2011թ. հուլիսի 7-ի թիվ 163 գրությունը

ո ր ո շ ու մ եմ.

1. Թույլատրել ,,Իջևանի բժշկական կենտրոն'' փակ բաժնետիրական ընկերությանը աճուրդային կարգով օտարելու ընկերության հաշվեկշռում գտնվող ՈՒԱԶ մակնիշի 1984,1988,1989 թվականների արտադրության 3 ավտոմեքենաները:
2. Ընկերության տնօրենին՝ հիմնական միջոցի օտարումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, ՀՀ ԿԱ պետական գույքի կառվարմանվարչության ,,Աճուրդի կենտրոն'' պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցով:
3. ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա.ՂՈՒԼԱՐՅԱՆ

2012թ. մարտի 26
Քաղաք Իջևան